«ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ» ԵՎ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ» ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

https://doi.org/10.59982/18294359-25.1-ak-06

Աշոտ Հայկի Խաչատրյան
ի.գ.դ., պրոֆեսոր
ՀԵՀ, Իրավագիտության ամբիոն
a.khachatryan@inbox.ru

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում են հանցավորության և քաղաքականության փոխկապվածության օրինաչափություններին, «քաղաքականության հանցավորություն» և «քաղաքական հանցավորություն» հասկացությունների հարաբերակցությանն ու տարանջատմանն առնչվող, ինչպես նաև նույն «քաղաքականության հանցավորության» եզրույթի բովանդակային իմաստի ու նշանակության մասին հարցերը՝ քրեաբանության (կրիմինալոգիա) տեսանկյունից: Չնայած այն հանգամանքին, որ բովանդակային առումով և գործառնական նշանակությամբ այդ հասկացությունների ինչպես հակադրման, այնպես էլ նույնականացման մասին այդպես էլ խոսք չի լինում, այդուհանդերձ սույն աշխատանքի շրջանակում կարևորվել է հետևյալ թեզը, ըստ որի՝ «քաղաքականության հանցավորությունը» քրեական իրավունքի առումով թեև քրեականացված չէ, սակայն այդ արարքի քրեաբանության (կրիմինալոգիա) գնահատման տեսանկյունից այն սպառնում է ոչ միայն պետության և հատկապես հանրային շահերին, այլև՝ քաղաքացիների անվտանգությանն ու բարեկեցությանը:

Հոդվածում առաջարկվում է «քաղաքականության հանցավորության» եզրույթի էության ու գործածության իրավաքաղաքական հետևյալ բնութագրումը, ըստ որի՝ այն անհրաժեշտ է ընկալել, մի կողմից, որպես պետական քաղաքականության հատկանիշ, որի դրսևորմամբ պայմանավորված պետության գործունեությունը կարող է հանգեցնել նույն պետության, հասարակության և սեփական ժողովրդի համար բացասական, այդ թվում նաև հանցավոր հետևանքների առաջացմանը, իսկ մյուս կողմից, որպես պետության գործունեությանը միջամտությամբ պայմանավորված հանցավորություն, դրա հակազդման քրեաբանական քաղաքականությունը միտված պետք է լինի այդ հանցավորության կանխարգելիչ և ներգործուն միջոցների արձագանքման ու նախաձեռնման անխուսափելիությանը:

Հիմնաբառեր. հանցավորություն, քաղաքականություն, քաղաքականության հանցավորություն, քաղաքական հանցավորություն, հակազդման քրեաբանական քաղաքականություն:

Ներածություն

Քաղաքականության և հանցավորության փոխկապակցվածության հիմնախնդիրները հանցավորության հակազդման քաղաքականության համատեքստում առավել քան առանցքային նշանակություն ունեն յուրաքանչյուր պետության համար: Ընդ որում, հանցագործության կատարման եղանակների, միջոցների, դրա դրսևորման ձևերի ընդլայնմամբ պայմանավորված անբարենպաստ միտումների ու հետևանքների առկայությունը թելադրում են այդ հիմնախնդիրների արդյունավետ լուծման համար անհրաժեշտ միասնական, գիտականորեն հիմնավորված և արդյունավետ պետական քաղաքականության մշակում և իրականացում: Սա հանցավորության հակազդման քաղաքականության համալիրում պետությունների համար ունի ռազմավարական և միաժամանակ մարտավարական նշանակություն:

Ասվածի շրջանակում, չխորանալով հանցավորության հակազդման ոլորտում պետության գործունեության հայեցակարգի բովանդակության, դրա իմաստի ու նշանակության, դրանում օգտագործվող՝ քրեաբանական (կրիմինալոգիական) քաղաքականության տարաբնույթ իրավաընկալումների տրամաբանության մեջ, այդուհանդերձ անհրաժեշտ է վերլուծել հանցավորության և պետության քաղաքականության փոխադարձ կապը՝ գիտական շրջանակներում շրջանառվող «քաղաքականության հանցավորության» քրեաբանական (կրիմինալոգիա) ասպեկտների և հատկապես քրեական իրավունքի հակասական իրավիճակի՝ «քրեական իրավունքի դեկադանսի» համատեքստում[1] [Шестаков, Преступность политики, 215-216, 224]:

Հանցավորության և քաղաքականության փոխադարձ կապի և դրսևորումների մասին հայտնի են բոլոր ժամանակներում և բոլոր ժողովուրդների մոտ: Դեռևս Հին Հռոմում պետության անվտանգության և իշխանության դեմ ուղղված գործողությունների ամբողջությունն ընկալվում էր որպես քաղաքական հանցագործությունների դասակարգման տեսակ [Зорин, 32]: Նույնաբովանդակ կիրառական նշանակություն էր ձեռք բերել խորհրդային տարիներին գաղափարական բնույթի դրդապատճառներով ու նպատակներով կատարվող հանցագործությունների տեսակը[2]:

---

1 «Դեկադանս» եզրույթը ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է «անկում», որը քրեական իրավունքի համատեքստում շրջանառության մեջ է դրվել այն նշանակությամբ, ըստ որի՝ իրավունքի արդիականացման պայմաններում, մի կողմից, քրեական իրավունքում կիրառվող պատժի և հարկադրանքի այլ միջոցների տարբերակված մոտեցումներն ավելի են հստակեցվել, մյուս կողմից, առերևույթ չկայացած են մնում հանցավորության հիմնախնդրի նկատմամբ ռեպրեսիվ մոտեցումները:

2 Մանրամասն տես, օրինակ՝ *Кононов В.С.* Понятие и признаки политической преступности. Закон и право. 2008. №8, Никулин В.В. Правосудие и политика: соотношение политики и права в советской системе наказаний // Genesis: исторические исследования. 2013. – № 5, Кабанов П.А. Политическая преступность: понятие, сущность, виды, причины, личность политического преступника, меры противодействия (криминологическое исследование): дисс... доктора юридических наук: Екатеринбург,

Սակայն, ներկա ժամանակաշրջանում, բովանդակային ու կիրառական այլ նշանակություն է ձեռք բերել հանցավորության և քաղաքականության փոխադարձ կապը, երբ «իրականություն է դառնում իշխանությունը կրելու և պահպանելու հետ հանցավորության փոխկապվածությունը» [Кабанов, Политическая преступность, 249] կամ երբ անհրաժեշտություն է առաջանում քրեաբանական գնահատական տալ պետության գործունեության նկատմամբ՝ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին միջամտություններին [Кабанов, Рецензия на книгу Шестаков, 75]:

Հանցավորության և քաղաքականության փոխկապվածության օրինաչափությունների շրջանակում՝ համակարծիք լինելով «պոստմոդեռնիստական սահմանադիր քրեաբանության» տեսության ներկայացուցիչների այն պնդման հետ, որ՝ «... հանցավորությունը դա՝ «ուրիշներին ինչ-որ բան փոխելու հնարավորություններից զրկելու» իշխանությունն է» [Henry, Milovanovic, 224], այդուհանդերձ, անհրաժեշտ է նկատել, որ այստեղ խոսք կարող է լինել պետության գործունեությանը միջամտությամբ պայմանավորված հանցավորության այնպիսի մակարդակների մասին, ինչպիսին են՝ կազմակերպված հանցավոր գործունեությունը՝ կապված այսպես կոչված «գորշ տնտեսության» հետ (թմրամիջոցների ապօրինի շրջանառություն, մ*արդու թրաֆիքին*գ կամ շահագործում, զենքի ապօրինի վաճառք և այլն), պետության կողմից սեփական ժողովրդի դեմ կատարված հանցագործությունը, ներքին և «մոլորակային» օլիգարխիկ բնույթի հանցավորությունը և այլն որոնք կազմում կամ կարող են կազմել որպես պետության քաղաքականության հետևանք: Բացի այդ, իրավական համակարգերի արդիականացման պայմաններում գիտական ժամանակակից հետազոտությունները և դրանց արդյունքները նույնպես միտված են իրավունքի գործառույթների միջոցով «քաղաքականության հանցավորություն» և «քաղաքական հանցավորություն» հասկացությունների իրավական բովանդակության ու նշանակության հիմնավորմանը [Шестаков, Преступность политики, 4, 10-11]:

Թերևս, բովանդակային առումով և գործառնական նշանակությամբ այդ հասկացությունների ինչպես հակադրման, այնպես էլ նույնականացման մասին այդպես էլ խոսք չի կարող լինել՝ և' իրավունքի տեսության մեջ, և' օրենսդրական, և իրավական պրակտիկայի մակարդակներում: Այդուհանդերձ, ձեռնպահ մնալով դրանց հարաբերակցության, այդ թվում՝ փոխադարձ կապի վերաբերյալ համակարգային նշանակության մոտեցումների ու տեսակետների գնահատումից, անհրաժեշտ է կարևորել, որ «քաղաքականության հանցավորությունը» քրեական իրավունքի առումով քրեականացված չէ, սակայն այդ արարքի քրեաբանության

2008, Лунеев В.В. Политическая преступность // Криминология / Под ред. В.Н. Кудрявцева, В.Е. Эминова. М.: 2004, Шестаков Д.А., Бойцов А.И. Перестройка криминологии и криминология перестройки // Вестник Санкт-Петербургского университета. Вып.4. 1991, Гринберг М.С. Криминология: теория, история, эмпирическая база, социальный контроль. СПб., 2014, Джекебаев У.С. Предупреждение преступности-важнейшая часть государственной политики: проблемы, решения, перспективы: // Материалы межведомстенной науч.-практич. конф. Алматы, 2004 և ուրիշներ:

(կրիմինալոգիա) գնահատման տեսանկյունից այն սպառնում է ոչ միայն պետության և հատկապես հանրային շահերին, այլև՝ քաղաքացիների անվտանգությանն ու բարեկեցությանը:

Այնուամենայնիվ, իրենց բովանդակային նշանակությամբ և ծավալներով պայմանավորված՝ այդ հասկացությունների հարաբերակցության և տարանջատման հիմքում անհրաժեշտ է նկատել հետևյալը.

1) **«Քաղաքական հանցավորությունն»** առնչվում է այնպիսի գործողության (անգործության) հետ, որի պարագայում անխուսափելի է դառնում օրենքով նախատեսված իրավական ներգործության միջոցների կիրառումը: Այդ իմաստով, անհրաժեշտ է նկատել, որ «քաղաքական հանցավորությունը» բոլոր դեպքերում փոխկապակցվում է իշխանությունը կրելու և պահպանելու հանցավոր բնույթի ձգտումների հետ, երբ, մի կողմից, պետության գործունեության շրջանակում բացասական ազդեցություն են ունենում ներքին միջամտությունները, իսկ, մյուս կողմից, ինքնիշխան պետության քաղաքականության մեջ ներգործուն ազդեցություն են ունենում արտաքին միջամտությունները: Ցավոք, արդի ժամանակներում այսպիսի հանցավոր երևույթների ակտիվացումը և առաջընթացի խորացումը ցանկացած պեության համար ողբերգական հետևանք են ունենում:

2) **«Քաղաքականության հանցավորությունն»** անհրաժեշտ է ընկալել որպես պետության գործունեության նկատմամբ այնպիսի միջամտությամբ պայմանավորված հանցավորություն, որի հակազդման քրեաբանական քաղաքականությունը միտված պետք է լինի այդ հանցավորության կանխարգելիչ և ներգործուն միջոցների արձագանքման ու նախաձեռնման անխուսափելիությանը:

Այսպես, քրեաբանության համատեքստում «քաղաքականության հանցավորության» հասկացության նշանակության իմաստաբանական (սեմանտիկ) հայեցակարգի հիմքում անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն այն, ինչ պետությունը սահմանել է որպես հանցավորություն, այլև՝ այն, ինչ հանցավոր է ըստ էության [Шестаков, Криминология, 190]:

Այստեղից, «քաղաքականության հանցավորության» եզրույթի էությունն անհրաժեշտ է ընկալել որպես պետության քաղաքականության այնպիսի հատկանիշ, որի դրսևորմամբ պայմանավորված պետության գործունեությունը կարող է հանգեցնել նույն պետության, հասարակության և սեփական ժողովրդի համար բացասական, այդ թվում նաև հանցավոր հետևանքների առաջացմանը: Անշուշտ, այդպիսի հետևանքներ կարող են առաջանալ օրենսդրական, ռազմական, ֆինանսական և այլ քաղաքականության ոլորտներում, որտեղ պետության գործունեության արդյունքում կարող են կատարվել «մարդու և հասարակության համար էական չարիք համարվող արարքներ՝ անկախ այն հանգամանքից, թե քրեական օրենքով դրանք որակվում են որպես հանցագործություն, թե ոչ» [Шестаков, Криминология, 217-218]:

Միաժամանակ, եթե հաշվի առնենք այն, որ պետական քաղաքականության պրակտիկայում և, մասնավորապես, սոցիալ-տնտեսական համակարգային նշանակության հետևանքների գնահատման բացակայության պայմաններում, տեսականորեն առանց համապատասխան հիմնավորման, պետական այդպիսի գործունեության իրականացումը կարող է հանգեցնել իրավաքաղաքական համակարգի «փլուզմանը»՝ ընդհանրապես, և բացասական ներգործություն ունենալ քաղաքականության արդյունավետության վրա՝ մասնավորապես [Коробеев, 332]:

Վերոհիշյալից ելնելով, կարծում ենք, որ «պետության քաղաքականության» և «քաղաքականության հանցավորության» հարաբերակցության հիմնախնդիրների առկայությունը կանխորոշում է միջդիսցիպլինար (միջառարկայական) համակարգային հետազոտության անհրաժեշտություն, որի ուսումնասիրության առարկան առավելապես միտված պետք է լինի «քաղաքականության հանցավորության» ճանաչմանը և այդ հանցավորության կանխարգելման ու հակազդման միջճյուղային կառուցակարգերի սահմանմանը:

Ասվածի համատեքստում անհրաժեշտ է նաև նկատել, որ մասնագիտական գրականության շրջանակում շրջանառվում է մոտեցում, ըստ որի՝ «հանցավորության հակազդումը» բովանդակային առումով ու նշանակությամբ համընկնում է ինչպես հանցավորության կանխարգելման, այնպես էլ հանցավորության դեմ պայքարի հետ [Крайнова, 103]: Սակայն, կարծում ենք, որ պետության քաղաքականության համատեքստում հանցավորության հակազդումն առավելապես պետք է ընկալել այնպիսի գործառնական վիճակի առկայություն, որի կիրառական նշանակությունը ոչ միայն պետք է բխի իրավական քաղաքականության բովանդակությունից, այլև՝ ունենա կարգավորիչ և միաժամանակ կողմնորոշիչ բնույթ՝ ապահովելով հանրային, այդ թվում՝ պետության, հասարակության, քաղաքացու օրինական շահերի պահպանման երաշխավորումը:

<u>Եզրակացություն</u>

Այսպիսով, ընդհանրացնելով պետության քաղաքականության համատեքստում «քաղաքականության հանցավորության» եզրույթի համակարգային վերլուծության արդյունքները, անհրաժեշտ է կատարել հետևյալ եզրահանգումները.

1) պետության իրավական համակարգի արդիականացման պայմաններում «քաղաքականության հանցավորություն» և «քաղաքական հանցավորություն» հասկացությունները բովանդակային առումով և գործառնական նշանակությամբ չեն կարող ինչպես հակադրվել, այնպես էլ նույնականացվել՝ իրավունքի տեսության, օրենսդրական և իրավական պրակտիկայի մակարդակներում,

2) «քաղաքականության հանցավորությունը» թեև քրեական իրավունքի առումով քրեականացված չէ, սակայն արարքի քրեաբանության (կրիմինալոգիա) գնահատման տեսանկյունից այն սպառնում է ոչ միայն պետության և հատկապես հանրային շահերին, այլև՝ քաղաքացիների անվտանգությանն ու բարեկեցությանը,

3) «քաղաքական հանցավորությունը» բոլոր դեպքերում փոխկապակցվում է իշխանությունը կրելու և պահպանելու հանցավոր բնույթի ձգտումների հետ, երբ մի կողմից՝ պետության գործունեության շրջանակում բացասական ազդեցություն են ունենում ներքին միջամտությունները, իսկ, մյուս կողմից՝ ինքնիշխան պետության քաղաքականության մեջ ներգործուն ազդեցություն են ունենում արտաքին միջամտությունները:

Այստեղից՝ «քաղաքականության հանցավորության» եզրույթի էությունն անհրաժեշտ է ընկալել, մի կողմից՝ որպես պետական քաղաքականության հատկանիշ, որի դրսևորմամբ պայմանավորված պետության գործունեությունը կարող է հանգեցնել նույն պետության, հասարակության և սեփական ժողովրդի համար բացասական, այդ թվում՝ նաև հանցավոր հետևանքների առաջացմանը, իսկ մյուս կողմից՝ որպես պետության գործունեությանը միջամտությամբ պայմանավորված հանցավորություն, դրա հակազդման քրեաբանական քաղաքականությունը միտված պետք է լինի այդ հանցավորության կանխարգելիչ և ներգործուն միջոցների արձագանքման ու նախաձեռնման անխուսափելիությանը:

Գրականության ցանկ

1. Шестаков Д.А. Преступность политики. Размышления криминолога. СПб., 2013., 224 С.
2. *Шестаков Д.А.* Криминология: преступность как свойство общества. Краткий курс. СПб.: 2001.,
3. Зорин А.В. Политическая преступность: криминологический анализ. дисс...канд.юр.наук. СПб, 2018,
4. Кабанов П.А., Политическая преступность как политико-криминологическая категория // Юридические исследования.2013. № 2.,
5. Кабанов П.*А.*, Рецезия на книгу *Шестаков Д.А.* Преступность политики. Размышления криминолога» // Криминология: вчера, сегодня и завтра, 4 (35) 2014,
6. Henry S., Milovanovic D. Constitutive criminology: beyond postmodernism. London, 1996., The review on the book of D.A. Shestakov «Crime of politics. Criminologist's thoughts», 2017
7. Коробеев А.И., *Уголовно-правовая политика России: от генезиса до кризиса*: монография / А.И. Коробеев. М.: 2019.
8. Крайнова Н.А., Некоторые тенденции современной отечественной государственной политики в сфере предупреждения преступности. / Правоприменение. М., 2024., Т.8, N2.

ON THE THEORETICAL ISSUE OF THE DISSOLUTION OF “THE CRIMINALITY OF POLITICS” AND “THE POLITICAL CRIMINALITY”

Ashot Khachatryan
Doctor of Law, Professor
EUA, Chair of Law
a.khachatryan@inbox.ru

Abstract

This article discusses the regularities of the relationship between crime and politics, the relationship and difference between the concepts of "the political criminality" and "the criminality of politics", as well as the issues of the substantive meaning and significance of the term "the political criminality" from the point of view of criminology. Despite the fact that in terms of content and operational significance there is no talk of either the opposition or identification of these concepts, nevertheless, the following thesis has been emphasized within the framework of this work, according to which, although "the political criminality" is not criminalized in terms of criminal law, from the point of view of criminology (criminology) assessment of this act, it threatens not only the interests of the state and especially the public, but also the security and well-being of citizens.

The article proposes the following legal and political characterization of the essence and use of the term "the political criminality", according to which it is necessary to perceive it, on the one hand, as a feature of state policy, the manifestation of which, conditioned by the state’s activities, can lead to negative, including criminal, consequences for the same state, society and its own people, and on the other hand, as a crime conditioned by interference in the activities of the state, the criminological policy of countering it should be aimed at the inevitability of responding to and initiating preventive and effective measures for that crime.

Keywords: criminality, politics, the political criminality, the criminality of politics, the country's criminological policy.

Ներկայացվել է՝ 10.04.2025թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 29.04.2025թ.